



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 8
ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԵՈՐՀՐԴԻ՝
2023 Թ. ՄԱՅԻՄԻ 31-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Բակլավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի ավարտական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում:
2. Պետական քննական հանձնաժողովների նախագահի հաշվետվության քննարկում:
3. Ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստացիա:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 24-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ 2022-2023 ուստարվա առկա ուսուցմամբ բակլավրիատի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները անցել են պահանջվող ընթացակարգերին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել: Ելույթ ունեցող ամբիոնների վարիչները նույնպես իրենց խոսքում նշեցին, որ պաշտպանությունները անցել են համապատասխան ընթացակարգով և խնդրահարույց դեպքեր չեն եղել:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ

ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Բ.Գ.Պ., պրոֆ. Վաչագան Գրիգորյանին, ով իր խոսքում մասնավորապես նշեց.

2022-23 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել բակալավրի 41 ուսանող: 1 ուսանող պաշտպանությանը չի ներկայացել: 41 ուսանողից վեց ուսանող ստացել է 20 միավոր, յոթ ուսանող՝ 19 միավոր, հինգ ուսանող՝ 18 միավոր, յոթ ուսանող՝ 17 միավոր, վեց ուսանող՝ 16 միավոր, երկու ուսանող՝ 15 միավոր, մեկ ուսանող՝ 14 միավոր, չորս ուսանող՝ 13 միավոր, մեկ ուսանող՝ 12 միավոր, մեկ ուսանող՝ 10 միավոր, մեկ ուսանող՝ 9 միավոր:

«Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 27 ուսանող: Հինգ ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող՝ 19 միավոր, երեք ուսանող՝ 18 միավոր, երկու ուսանող՝ 17 միավոր, չորս ուսանող՝ 16 միավոր, չորս ուսանող՝ 15 միավոր, վեց ուսանող՝ 14 միավոր, երկու ուսանող՝ 12 միավոր:

Մագիստրոսական թեզեր պաշտպանվել են երեք ծրագրով՝ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն», «Հայ գրականություն»:

«Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է 7 ուսանող, որոնցից երկու ուսանող ստացել է 20 միավոր, երկու ուսանող ստացել է 19 միավոր, երեք ուսանող՝ 18 միավոր: Մեկ ուսանող չի ներկայացել պաշտպանությանը:

«Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» ծրագրով պաշտպանության մասնակցել է յոթ ուսանող, որոնցից չորս ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող՝ 18 միավոր, մեկ ուսանող՝ 16 միավոր, մեկ ուսանող՝ 10 միավոր:

«Հայ գրականություն» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է տասնմեկ ուսանող, որոնցից ինը ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող՝ 18, մեկ ուսանող՝ 15 միավոր:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել:

Թե՛ պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքները, թե՛ մագիստրոսական թեզերը ընդհանուր առմամբ համապատասխանում էին ներկայացվող պահանջներին: Աշխատանքները բովանդակային առումով հիմնականում ունեին պատշաճ մակարդակ, շարադրված էին գիտական ոճով:

Ներկայացված աշխատանքներում, ըստ կանոնակարգային պահանջի, նշված էին աշխատանքի նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը:

Հիմնականում պահպանված էին նաև կառուցվածքային, տեխնիկական պահանջները:

Պաշտպանության ընթացքում ուսանողները պատասխանելու ընթացքում ներկայացրին նաև լուսապատկերային ցուցադրություններ:

Պաշտպանությանը մասնակցած ուսանողներն ընդհանուր առմամբ ունեին բավականին լավ գիտելիքներ, կարողանում էին ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հանձնաժողովի հարցերին: Կային նաև մի քանի անհաջող պատասխաններ, հետևաբար նաև ցածր գնահատականներ:

Ընդհանուր առմամբ ուսանողների մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, և վատ պատասխանները փոքրաթիվ էին: Թե՛ գրականության, թե՛ լեզվի՝ գծով աշխատանքների թեմաները մեծ մասամբ արդիական էին: Դրանք հիմնականում վերաբերում էին վիճահարույց տարբեր խնդիրների:

Բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները հիմնականում հաջող էին ընտրված:

Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը, ուսանողների պատրաստվածությունը վկայում էին, որ աշխատանքը ղեկավարող դասախոսները և համապատասխան ամբիոնները իրենց աշխատանքը ընդհանուր առմամբ կատարել են անհրաժեշտ մակարդակով: Աշխատանքներում հիմնականում պահպանված էին նաև տեխնիկական պահանջները:

Գրախոսները ևս իրենց կարծիքները ներկայացրին պատշաճ կերպով: Գրախոսություններում հստակ նշված էին ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում առկա վրիպակներն ու թերությունները, արված էին տեղին առաջարկություններ, որոնք, կարծում ենք, օգտակար եղան ուսանողների համար և հետագայում գիտական այլ աշխատանքներ կատարելիս նրանց կօգնեն ճիշտ կողմնորոշվել: Հատկապես բակալավրիատի ավարտական որոշ աշխատանքներում կար վերլուծականության պակաս: Ցանկալի է, որ ուսանողները եղած տեսակետները վերլուծաբար ներկայացնեն, հայտնեն իրենց դիրքորոշումը, ըստ անհրաժեշտության քննադատաբար մոտենան եղած մոտեցումներին, որի շնորհիվ ինքնուրույնության մակարդակն ավելի բարձր կլինի: Պարզ է, որ այդ հարցում մեծ է գիտական ղեկավարների ու մասնագիտական ամբիոնների դերը:

Պաշտպանության ընթացքում պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի դեկանի և դեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ առանձին - առանձին ներս հրավիրվեցին համապատասխան ամբիոնների առկա ուսուցմամբ սովորող ասպիրանտները: Վերջիններս ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրենց կատարած աշխատանքները: Գիտխորհրդի անդամները մասնավորապես՝

ա/ ԼՍԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 3-րդ կուրս) **Լիլիթ Հմայակի Օստուրյանի** ատեստավորման հարցը: **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Մ. Ֆելեքյանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Լիլիթ Օստուրյանը 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Բառաքերականական փոխակերպումները ռուս-հայերեն թարգմանություններում» (Վ. Պիկուլ «Ֆավորիտ >>» (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ Բ. Գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյան: Ուսումնասիրել է տեսական գրականությունը: 2022-2023 ուստարում տպագրել է քերականական փոխակերպումների վերաբերյալ երկու հոդված՝ «Խոսքիմասային փոխարինումները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ», «Գոյականի քերականական կարգերի փոխարինումները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ»: Տպագրության է պատրաստել ևս երկու հոդված՝ «Պատմական իրությունների և հնաբանությունների թարգմանությունը Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպում» և «Շարահյուսական փոխակերպումները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ» վերնագրերով: Մյուս երկու հոդվածները տպագրության նախապատրաստման փուլում են:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Լիլիթ Օստուրյանին** ատեստավորել:

բ/ ԼՍԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 3-րդ կուրս) **Հաջար Ռեզայի Մոմենիի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Մ. Ֆելեքյանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Հաջար Մոմենիին ԵՊՀ-ի և Սպահանի (Իրանի) համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է

<<Սոմատիկ դարձվածքները պարսկերենում և հայերենում (իմաստա-կառուցվածքային և մշակութաբանական քննություն)>>, ղեկավար՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արևելագիտության բաժնի ավագ գիտաշխատող, բ. գ. թ., դոց. Հասմիկ Կիրակոսյան: Հանձնել է <<Անգլերեն>> առարկայից քննություն: Ուսումնասիրում է տեսական գրականությունը: Հետազոտում է երկու լեզուների սոմատիկ դարձվածքների հաճախ գործածվող ձևաբանական կաղապարները, կատարում է քերականական և իմաստային դասակարգումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Հաջար Մոմենիին ատեստավորել՝ հորդորելով առաջիկայում աշխատել առավել ակտիվ:

գ/ ԼՍԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 2-րդ կուրս) **Վալտեր Տիգրանի Բերբերյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Մ. Ֆելեքյանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Վալտեր Բերբերյանը 2021 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է <<Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները>> (1950-ական - 2020-ական թթ.) (Ժ.02.01<<Հայոց լեզու>>), ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյան: Վ. Բերբերյանը 2021-2022 ուստարում մասնակցել է պարտադիր ու ընտրովի դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Մասնակցել է հանրապետական և միջազգային մի քանի գիտաժողովների՝ «Անգլերենը Բրյուսովում. անցյալը, ներկան, ապագան» խորագրով միջազգային գիտաժողով՝ նվիրված ԲՊՀ անգլերենի ամբիոնի ստեղծման 85-ամյակին (Երևան), "German educational environment in a cross-cultural context" միջազգային ծրագիր (Գերմանիա), "Арменоведение в контексте языков и культур" միջազգային գիտաժողով (Մոսկվա), "Digital Learning in Adult Education" 6-շաբաթյա դասընթաց և այլն: Ուսումնասիրել է տեսական գրականությունը: «Հայագիտական հանդեսում» տպագրել է 1 գիտական հոդված: Շարադրման փուլում են մյուս հոդվածները: Հրատարակել է նաև հրապարակախոսական, գիտահանրամատչելի, մեթոդական հոդվածներ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթություն»-ում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Վալտեր Բերբերյանին** ատեստավորել:

դ/ ԼՍԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Ֆառկա ուսուցում, 1-ին կուրս՝ **Գայանե Գեղամի Դալլաքյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց.դոց. Ա. Տեր-Մինասյանը, Արտ. Սարգսյանը, Թ. Տոնոյան և ուրիշներ:

Նշվեց, որ Գայանե Դալլաքյանը 2022 թ. ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա **Ֆառկա ուսուցում**՝ «Հայոց լեզու» մասնագիտության գծով **ՖԺ.02.01**՝:

Նրա ատենախոսության թեման է «Բարդ նախադասության դասակարգման հիմնախնդիրը հայ քերականագիտության մեջ» **ՖԺ.02.01 «Հայոց լեզու»**՝, ղեկավար՝ Բ. Գ. ղ., դոց. Փառանձեմ Մեյթիխանյան: Գ. Դալլաքյանը ուսումնասիրել է տեսական գրականությունը: Մասնակցել է պարտադիր և կամընտրական առարկաների դասընթացներին, որի արդյուքում հավաքել է պահանջված 12 և 18 պարտադիր կրեդիտները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Գայանե Դալլաքյանին** ատեստավորել:

Ե/ Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Կամո Անթերանիկի** Էբրահիմի ատեստավորման հարցը /ղեկավար՝ Բ.Գ.ղ., պրոֆ. Ա. Աբաջյան /հրաման N 7/2, 18.01.2021թ./, թեմա՝ «Պարսկերենից փոխառյալ կենդանանունները միջին հայերենում և նրանց պատմական զարգացումը արդի արևելահայերենում»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ. Գ. ղ., պրոֆ., պրոֆ. Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը, Լ. Սարգսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ նախորդ մեկ տարվա ընթացքում **Կամո Անթերանիկի** Էբրահիմը ուսումնասիրել է Ռուբեն Ղազարյանի «Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կազմաբանական բառարանի»՝ Ա /կաթնասուններ/ և Բ /թռչուններ/ գրքերը՝ քարտազրելով պարսկերենից փոխառյալ կենդանանունները, հրատարակության է պատրաստել 2 զիտական հոդված պարսկական փոխառությունների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Կամո Անթերանիկի** Էբրահիմին ատեստավորել:

զ/ Լ Ս Ե Ց Ի Ն. – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Մանե Դավթի Դանիելյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ. Գ. ղ., պրոֆ., պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ 3 տարվա առկա ասպիրանտ Մ. Դանիելյանը 2021-2022 ուստարում մասնակցել է երկու գիտաժողովի: Վլադիմիր Կիրակոսյանի մահվան տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողովին հանդես է եկել «Կնոջ կերպարը Բաֆֆու քնարերգության մեջ» զեկուցմամբ: 2022 թվականին բարեհաջող հանձնել է մասնագիտական քննությունը:

Թեմայի հետ առնչվող նյութերի վերընթերցման, հավաքագրման և դասակարգման աշխատանքներին զուգընթաց տպագրության է հանձնել 3 հոդված: Ուսումնասիրում է Բաֆֆու բազմաժանր ու բազմաշերտ գրական ժառանգությունը, գրողին նվիրված մենագրություններն ու այլ ուսումնասիրությունները (Ա.Ավթանդիլյան, Ա.Գևորգյան, Ե.Պետրոսյան, Ս. Սարինյան):

2020-2021 ուստարում հաջողությամբ հանձնել է պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգարքները՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները: 2020-2021 ուստարում որպես դասախոս աշխատելով Հայ-ռուսական համալսարանում՝ լրացրել է ասպիրանտական պրակտիկայի համար անհրաժեշտ 35 դասաժամերը:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Մանե Դավթի Դանիելյանին** ատեստավորել:

Է/ ԼՍԵՑԻՆ. – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Բ. գ. դ., պրոֆ., պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Հ. Հովակիմյանը գիտական հոդված է տպագրել միջազգային հեղինակավոր ամսագրում՝ 20-րդ դարավերջի հայ արձակի, պատմվածքում պատկերավորման առանձնահատկությունների և ռճական խնդիրների վերաբերյալ: Նրան հետաքրքրում են նաև 20-րդ դարավերջի հայ գրականության մեջ տեղի ունեցած ժանրային փոփոխությունները, մասնավորապես՝ պատմվածքի ձևափոխումը, այլ ժանրերի հետ միաձուլման և սերտաճման միտումները, որի վերաբերյալ էլ պատրաստել և տպագրության է հանձնել հոդված, որը լույս կտեսնի առաջիկա ամիսներին:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Հովհաննես Հովակիմի Հովակիմյանին** ատեստավորել:

Ր/ ԼՍԵՑԻՆ. – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Արման Արթուրի Վերանյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ. գ. դ., պրոֆ., պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ 2 տարվա առկա ասպիրանտ Ա. Վերանյանը 2021-2022 թթ. մասնակցել է ասպիրանտական ծրագրով նախատեսված բոլոր պարտադիր և կամընտրական դասընթացներին՝ ավարտելով կրթական բաղադրիչը:

Վերջին մեկ տարում՝ 2022-2023 թթ., զբաղվել է թեմային առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով, կարդացել է սկզբնաղբյուրները, օժանդակ նյութերը, հոդվածներն ու գիտական աշխատությունները:

Ա. Վերանյանը դեռևս չունի տպագրված հոդվածներ, բայց ակտիվ աշխատանքներ է կատարում երկու հոդվածների ուղղությամբ: Այժմ պատրաստվում է մասնագիտական քննությանը, որը պլանավորում է հանձնել առաջիկայում:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Արման Արթուրի Վերանյանին** ատեստավորել:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՅԱՆ**